

**ԻՄԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ
/Ֆրանսերեն-հայերեն, հայերեն-ֆրանսերեն/**

Բուհական մակարդակում գործնական թարգմանության դասավանդումը հիմնվում է նշանագիտության այն հիմնարար դրույթի վրա, ըստ որի լեզվական նշանի արժեքը բխում է արտահայտության և բովանդակության դիտվածքների հարաբերակցությունից: Ըստ այդմ, մեծապես կարևորվում է յուրաքանչյուր լեզվական միավորի բովանդակային ծավալի ճիշտ և հստակ ըմբռնումը, որն իր հերթին դրսևորվում է իմույթի բաղադրիչ տարրերի՝ իմակների փոխադարձ կապերի մակարդակում:

Բնագրի և թարգմանված տեքստի իմաստային միավորների համարժեքությունը ապահովվում է ոչ միայն բառի, բառակապակցության կամ ամբողջ նախադասության մակարդակում, այլև պայմանավորվում է լեզվական նշանների բովանդակության ձևի համարժեքությամբ:

Իմակային վերլուծությունը, բացահայտելով յուրաքանչյուր լեզվական նշանի բովանդակության ձևի յուրահատկությունները, մասնավորապես, իր ուրույն նշանակությունն ունի գործնական թարգմանության ժամանակ հարանուների ճիշտ ընկալման և յուրացման խնդրում: Վերջիններիս սխալ կիրառումը, ինչպես հայտնի է, հանգեցնում է իմաստային շեղումների կամ պարզապես աղճատում բնագրի իմաստը: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ խոսքն ամենևին չի վերաբերում հարանունության վրա հիմնված բանադրածումներին, երբ լեզվական նշանի արտահայտության դիտվածքի հարանմանությունը հեղինակի գիտակցված ընտրության արտահայտությունն է և դրանով իսկ, օժտվում է հուզարտահայտչական որոշակի արժեքով:

Մեր նպատակն է դիտարկել իմակային վերլուծության նշանակությունը՝ բնագրի հարանունները ճշգրիտ ընկալելու և թարգմանող լեզվի համարժեք միավորներով արտահայտելու թարգմանական ունակությունների և հմտությունների ձևավորման խնդիրը:

Հարանունների ուսուցումը և դրանց անսխալ կիրառման հմտությունների ձևավորումը, մեր կարծիքով, պետք է հիմնվեն լեզվի միավորների իմաստային ծավալի վերլուծության և դրանից բխող համապատասխան բառային համակցելիության հնարավորությունների ուսումնասիրության վրա:

Ելնելով այն մեկնարկային դրույթից, որ լեզվական նշանի առկայացման ընթացքը պայմանավորված է իրադրային համատեքստի գոյությամբ, գտնում ենք, որ մերունակային լեզվական նշանն ուսանողի լեզվագիտակցության մեջ փոխակերպվում է խոսքային միավորի՝ անցնելով հետևյալ պայմանական փուլերով. ընկալվելով իբրև բառարանային բառ-միավոր, իբրև բառակապակցության բաղադրիչ տարր, իբրև որևէ նախադասության անդամ և վերջապես, ընդգրկվելով որևէ ասույթի մեջ, իմաստավորվում է իրապես տեղի ունեցող հաղորդակցության համատեքստում:

Շտապենք նշել, որ հիշյալ փուլերի հաջորդական ընթացքն ունի զուտ պայմանական բնույթ և կարող է փոփոխության ենթարկվել ուսանողի անհատական ունակություններին և լեզվական ընդունակություններին համապատասխան:

Այնուամենայնիվ, գործնական թարգմանության դասընթացներում յուրաքանչյուր նոր թեմա ներկայացնող տեքստերի բառապաշարի յուրացումն ու կիրառումը հանպատրաստից խոսքում, անտարակույս, կլինի ավելի հիմնավորված և կնպաստի ուսանողների լեզվամտածողության զարգացմանը, եթե անցնի ընկալման և յուրացման վերոհիշյալ փուլերով:

Գիտակցված ընկալմանը նպաստող բառի իմաստային ծավալի վերլուծության համար հնարավոր ենք համարում առաջարկել վարժությունների հետևյալ շարքը.

1. Առաջարկված հարանունների բառարանային սահմանումների հիման վրա հայտնաբերել վերջիններիս տարբերակիչ իմակները:
2. Ցույց տալ դրանց համակցելիության հնարավորություններն առանձին բառակապակցությունների թարգմանության միջոցով:
3. Գտնել հարանունների համատեքստային համարժեքները՝ կատարելով առաջարկվող տեքստերի թարգմանությունը:
4. Ձարգացնել ուսումնասիրվող միավորները հանպատրաստից խոսքում օգտագործելու հմտությունները թարգմանության դասաժամերին կազմակերպվող բազմալեզու բանավեճերի միջոցով:

Անդրադառնալով կոնկրետ օրինակի՝ *éclairer / éclaircir* հարանունային զույգի վերլուծությանը, դիտարկելով վերջինիս ճիշտ ընկալմանն ու յուրացմանը նվիրված վարժությունների տիպեր: Նախ և առաջ առաջարկվում է կատարել դրանց իմաստային միջուկի հիմքը կազմող *éclair* իմակի բառարանային սահմանումների ուսումնասիրությունը:

éclair - lucur brève et très vive traduisant une décharge électrique

éclair - *brusque manifestation* de ce qui a trait à l'intelligence

Ուսանողների օգնությամբ հայտնաբերվում է, որ վերոհիշյալ սահմանումներում հատկապես ընդգծված են rapidité, intensité, spontanéité իմակները, որոնք իրենց արտահայտությունն են գտնում éclair բառը ներառող առանձին բառակապակցությունների հայերեն թարգմանություններում:

visite éclair (rapidité, brièveté)

voyage éclair (rapidité, brièveté)

éclair de lucidité (spontanéité)

éclair de génie (spontanéité)

nouvelle éclair (brièveté, rapidité)

guerre éclair (rapidité, intensité)

կարճատև այց, այցելություն

կարճատև ճանապարհորդություն

մտքի փայլատակում

հանճարի փայլատակում

շտապ հաղորդագրություն

կայծակնային պատերազմ

Հաջորդ վարժության մեջ առաջարկվում է առանձին հայերեն նախադասությունները թարգմանել ֆրանսերեն՝ օգտագործելով éclair բառը կայուն կապակցությունների ներսում:

1. Քաղաքագետների կարծիքով՝ *կայծակնային պատերազմը* պետք է տևեր երկու շաբաթ:

2. Խոշոր ստեղծագործությունների հիմքում դրանց հեղինակների *հանճարի փայլատակումն* է:

3. Անցյալ տարի մենք երեք *կարճատև ճանապարհորդություն* կատարեցինք եվրոպայում:

4. Ինձ զարմացնում է այդ արվեստագետի *մտքի փայլատակումը*:

5. Երկու տարի առաջ *կարճատև այցով* եղանք Փարիզում:

Վարժությունների հաջորդ փուլը նպատակ ունի շարունակելու éclairer / éclaircir բայերի իմակային միջուկի վերլուծությունը, կրկին անդրադառնալով դրանց բառարանային սահմանումներին:

éclairer = répandre de la lumière

éclairer = rendre compréhensible,
informer, expliquer

éclaircir = rendre plus clair

Ուսանողների օգնությամբ առանձնացվում է երկու բայերի տարբերակիչ իմակը, որը կարելի է արտահայտել *totalité / gradualité* հակադրությամբ:

Յուրացված լեզվական նյութը ակտիվացնելու համար առաջարկվում է թարգմանել բառակապակցությունների շարքեր և զետեղել դրանք նախադասությունների մեջ:

éclairer la route - լուսավորել ճանապարհը

éclairer une question - պարզաբանել որևէ հարց

éclairer le public - իրազեկել բնակչությանը
éclaircir la pièce - պայծառացնել սենյակը
éclaircir un mystère - լույս սփռել առեղծվածի վրա

Հետևյալ փուլում հանպատրաստից խոսքի զարգացման համար առաջարկվում է օգտագործել հիշյալ հարանունները «Ecriture sous contrainte» վարժության միջոցով, որում, դասախոսի հայեցողությամբ, ընտրվում է գրավոր խոսքի ժանրը /հոդված, պաշտոնական նամակ, պաշտոնական ելույթ/ և առաջարկվում օգտագործել արդեն իսկ յուրացրած բառակապակցությունները: Գրված նյութի հիման վրա ուսանողները ծավալում են բազմալեզու բանավեճ՝ նմանակելով որևէ թարգմանչական իրադրություն /օր., գիտաժողովի, հարցազրույցի հանպատրաստից թարգմանություն/:

Տարբերակիչ իմակների հայտնաբերումը հարանունների զույգերում, անկասկած, հնարավոր է և արգասաբեր, եթե վերջիններս առաջացել են միևնույն բառարմատից: Այս դեպքում հարանունային հակադրումներն ստեղծվում են որևէ տարբերակիչ իմակի շնորհիվ, ընկալվելով որպես տարանման լեզվական միավորներ թե՛ իմաստային և թե՛ ոճական առանձնահատկությունների տեսանկյունից: Համեմատեմք.

1. inclinaison / inclination հակադրումը հիմնվում է caractéristique *physique ou morale* տարբերակիչ իմակների առկայացումների վրա: Օրինակ,

- l'inclinaison du terrain
- avoir l'inclination à suspecter ses voisins

2. largeur / largesse զույգի տարբերակիչ իմակներն են caractéristique de l'objet et de la personne: Օրինակ,

- la largeur d'une table
- la largesse de cette personne l'a comblé

3. prolongation / prolongement հարանունային հակադրումը հիմնված է համապատասխանաբար *durée / espace* տարբերակիչ իմակների վրա: Օրինակ,

- une prolongation de congé
- le prolongement d'une voie ferrée

4. graduation / gradation զույգի հիմքում segmentation / progression իմակներն են: Օրինակ,

- la graduation d'un thermomètre
- la gradation des efforts

5. Դիտարկելով affectif / affectueux հարանունային զույգը տարբեր բառակապակցություններում, հնարավորություն է ստեղծվում վեր հանել ներկայաց-

վող միավորների ոճաբանական-գործառական արժեքի առանձնահատկությունները: Օրինակ,

- valeur affective du mot (զիտ. ոճ)
- état affectif du malade (զիտ. ոճ)
- un enfant affectueux (խոսակց. ոճ)

Ինչ վերաբերում է տարբեր բառարմատներից առաջացած հարանունությանը, կարծում ենք, որ թարգմանության ընթացքում հնարավոր իմաստային աղճատումներից խուսափելու համար կարելի է առանձնացնել յուրաքանչյուրի բովանդակային դիտվածքի հիմնական իմակները: Օրինակ, conjecture – հիմնական իմակն է՝ «hypothèse»

conjoncture – հիմնական իմակն է՝ «ensemble de circonstances»,

ինչն էլ իր արտահայտությունն է գտնում տվյալ միավորների համակցելիության հետևյալ հնարավորություններում.

1. se perdre en conjectures – զանազան վարկածներ առաջարկել,
2. attendre une meilleure conjoncture – սպասել ավելի բարենպաստ հանգամանքների:

Նմանատիպ վերլուծության կարող են ենթարկվել opprimer / oppresser, infecter / infester, allocution / allocation և բազմաթիվ այլ հարանունային զույգեր, որոնք վերջին հաշվով առնչվում են «թարգմանչի կեղծ բարեկամների» խնդրին և, ըստ այդմ, կարևորվում են, մասնավորապես, հայերենից ֆրանսերեն կատարվող թարգմանությունների իմաստային և գործառական համարժեքությունն ապահովելու համար: արժեքությունն ապահովելու համար:

Հանպատրաստից խոսքում լեզվի միավորների և առանձնապես հարանունների անսխալ կիրառումը ենթադրում է ուսուցման նախնական փուլում վերջիններիս բովանդակային դիտվածքի իմակային վերլուծության անհրաժեշտությունը: Տարբերակիչ և հիմնական իմակների հայտնաբերումը հնարավորություններ է ստեղծում նպաստելու ուսանողների լեզվագագացողության ձևավորմանը, նրանց օգնելու «տեսնել» բառերի ներքին ձևը և դրանով իսկ կանխատեսել դրանց համակցելիության հնարավորությունները:

Գրականություն

1. Greimas A. J., Sémantique structurale. Recherche de méthode, Paris, 1972.
2. Л. К. Латышев, Как готовить переводчиков, и сб: Тестовые упражнения, вып. 24, Москва, 1999.
3. Языкознание. Большой энциклопедический словарь. / Гл. ред. В. Н. Ярица, Москва, 1998.